ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԼՈՒՌ ՀԱՄԱՃԱՐԱԿ

Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա
2016

Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան

Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա

ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԼՈՒՌ ՀԱՄԱՁԱՅՆԱԿ

2016

UDC 396:343.61:316.3

Ցանկանում ենք մեր երախտիքը հայտնել «Կանանց աջակցման կենտրոնի» տվյալների վերլուծաբան և գրող Անի Ճիլոզեանին, ով «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի մյուս անդամների աջակցությամբ հեղինակել է այս զեկույցը: Մեր շնորհակալությունն ենք հայտնում նաև Մարիա Աբրահամյանին՝ թարգմանության և Բենո Միշոյանին՝ համակարգչային ձևավորման համար: Ցանկանում ենք նաև շնորհակալություն հայտնել «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան»-ին այս նախաձեռնությանը դրամական աջակցություն տրամադրելու համար:

Սույն զեկույցը նվիրվում է ընտանեկան բռնության բոլոր զոհերին ինչպես Հայաստանում, այնպես էլ ամբողջ աշխարհում: Սրտի խորին ցավով՝ մենք կհիշենք մեր ընկերակից քույրերին, ովքեր ողբերգական հանգամանքներում սպանվել են իրենց զուգընկերների և ընտանիքի անդամների կողմից: Մեր հարգանքը մատուցելով հանգուցյալներին՝ լիահույս ենք, որ կկարողանանք փոփոխել կանանց ապագան: Մենք ձգտում ենք ապրել մի աշխարհում, որտեղ ոչ մի կին չի ենթարկվում խոշտանգումների և բռնության ընտանիքի անդամների և զուգընկերոջ կողմից:

ISBN 978-9939-1-0363-1

© Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա, 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հասկացությունների բառարան 6

Առաջաբան 8

Ներածություն 10

Կնասպանություն եզրի
ստուգաբանական ակնարկ 13

Իրադրությունը Հայաստանում 16

Բռնությունների մահաբերության
ռիսկային գործոնները 18

2010-2015թթ. ակնարկ 25

Անպատժելիություն և
անարդարություն 41

Քաղաքականության մշակման
առաջարկություններ 59

Կոալիցիայի մասին 62

Ծանոթագրություններ..... 63

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Ընտանեկան բռնություն	ֆիզիկական, հոգեբանական, սեռական և տնտեսական բռնության բոլոր դրսևորումներն ինչպես ընտանիքի ներսում, այնպես էլ նախկին կամ ներկա ամուսինների կամ զուգընկերների միջև:
Գենդերային հավասարություն	կանանց և տղամարդկանց՝ անկախ նրանց ի ծնե վերագրված սեռից, հավասար իրավունքներին, պարտավորություններին և հնարավորություններին վերաբերող մարդու իրավունքների խնդիր:
Գենդերային հիմքով բռնություն	բռնություն, որն առաջացնում է գենդերային դերերից բխող ակնկալիքների և հարաբերություններում իշխանության անհավասար բաշխման հետևանքով:
Գենդերային մեյնսթրիմինգ	կամ գենդերային հավասարության հիմնահարցերին համալիր մոտեցում, որը կանանց և աղջիկների ներգրավումն է գործողություններում, օրինագծերում, քաղաքականություններում կամ ծրագրերում՝ գենդերային հավասարության հասնելու նպատակով:
Զուգընկերոջ բռնություն	նախկին կամ ներկա զուգընկերոջ կողմից ճնշումներ, որոնք առաջացնում են ֆիզիկական, հոգեբանական, սեռական և տնտեսական վնաս:
Կնատյացություն	կանանց, որպես առանձին խմբի հանդեպ արհամարհանք ու նրանց ստորադասում՝ հիմնված կանանց ավելի ստորադաս և անարժան լինելու ենթադրության վրա:

Կնասպանություն (ֆեմիցիդ) [1]	կանանց և աղջիկների սպանություն՝ նրանց գենդերային պատկանելության հիմքով, որը բխում է գենդերային անհավասարության և տնտեսապես ոչ ինքնուրույն լինելու հանգամանքներով:
Սեքսիզմ	Գենդերային հիմքով խտրականություն, որին նպաստում են հասարկությունում առկա մշակութային պատկերացումները, բարքերը ու կարծրատիպերը:

[1] [Ծան. թարգմ.] Սույն զեկույցում *femicide* [լատիներեն *femina*՝ կին և *cide* սպանություն] եզրը թարգմանվել է որպես կնասպանություն՝ ըստ Մեսրոպ Կ. Գույումճեան, Ընդարձակ Բառարան Անգլիերէնէ Հայերէն բառարանի: Տե՛ս, Մեսրոպ Կ. Գույումճեան, Ընդարձակ Բառարան Անգլիերէնէ Հայերէն, Պէյրութ: Կ. Տօնիկեան եւ Եղբայրք (1981) էջ 507

ԱՌԱՋԱԲԱՆ

Սույն զեկույցը հրատարակվել է «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի (այսուհետ՝ Կոալիցիա) կողմից և արձանագրում է կանանց սպանություններն իրենց զուգընկերների և ընտանիքի անդամների կողմից՝ լույս սփռելով գենդերային հիմքով սպանությունների և բռնության այն դրսևորումների վրա, որոնց ենթարկվում են հատկապես Հայաստանաբնակ կանայք:

Զեկույցում օգտագործվում է կնասպանություն եզրույթը՝ գենդերային տեսանկյունից չեզոք մարդասպանություն եզրույթի փոխարեն, քանի որ վերջինս անտեսում է անհավասարության ու ճնշումների այն յուրահատուկ արգելքները, որոնց բախվում են կանայք:

Հայաստանում ընտանեկան սպանությունները մեծապես իրականացնում են տղամարդիկ, և միայն հազվադեպ են կանայք սպանում զուգընկերներին՝ այն էլ հաճախ ինքնապաշտպանության նկատառումներից: Այսպիսով, գենդերային համատեքստը և ընտանեկան բռնության ազդեցությունը ձևավորում են կնասպանություն եզրի յուրահատուկ դասակարգումը:

Ընտանեկան բռնության և դրա հետևանքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված կոալիցիայի ջանքերի շնորհիվ՝ ավելի շատ դեպքեր են ի հայտ գալիս և լրատվամիջոցների ուշադրությանն արժանանում: Այդուհանդերձ, կնասպանության դեպքերը ցավալիորեն անտեսվում են հաշվետվողականության անբավարար մեխանիզմների և իրավասու մարմինների ու հանցագործի ընտանիքի՝ գործը քողարկելուն նպատակաուղղված ջանքերի պատճառով:

Մինչ օրս Հայաստանում ընտանեկան սպանությունների վերաբերյալ առկա տեղեկատվությունը թերի է, և գոյություն չունի գործերի վերաբերյալ համապարփակ տվյալներ հավաքագրող որևէ պետական մարմին:

Այս զեկույցում մանրամասնորեն ներկայացվում են 2010-2015 թթ. Կոալիցիայի անդամ կազմակերպությունների կողմից գրանցված 30 հայտնի դեպքերից 28-ը, և հիշատակվում են որոշ չգրանցված դեպքեր, որոնք կամ ընդհանրապես չեն դասակարգվել, կամ էլ որակվել են որպես «ինքնասպանություն»:

Ջուգընկերոջ կողմից սպանված կանանց թիվը ներկայացնելիս՝ զեկույցում օգտագործվում է «առնվազն» արտահայտությունը, քանի որ հենվելով միայն հանրային տեղեկատվության վրա՝ անհնար է համոզված լինել, որ մահվան որևէ դեպք բաց չի թողնվել:

Չնայած ՄԱԿ-ի սահմանած ֆեմիցիդ (կնասպանություն) եզրույթի շրջանակը ընդգրկում է կանանց նկատմամբ բռնության այլ տեսակները ևս, այդ թվում՝ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումը[2], սակայն այս զեկույցի դիտակետում միայն ընտանեկան սպանություններն են:

Սույն զեկույցը հասարակությունում փոփոխություններ բերելու նպատակով մշակված գործիք է: Այն նկարագրում է ընտանեկան բռնության ռիսկային գործոնները, դրա մահաբերությունը, համակարգային անպատժելիությունն ու անարդարությունը՝ փորձելով բարելավել զոհերին աջակցելու և մեղավորներին պատժելու ինստիտուցիոնալ և այլ մեխանիզմները:

[2] [Թան. թարգմ.] Ջեկույցի անգլերեն տարբերակում կիրառվում է *feticide*՝ պտղասպանություն եզրը, սեռով պայմանավորված պտղի սպանություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գենդերային հիմքով սպանությունները կանանց նկատմամբ բռնության առավել ծայրահեղ դրսևորումներ են և կանանց՝ կյանքի, մարդասիրական վերաբերմունքի, անձնական ազատության և խտրականության բացառման իրավունքների կոպիտ խախտում են (ՄԱԿ ԳԽ[3] 2013):

Մինչ տղամարդկանց համար ամենամեծ վտանգը հասարակական վայրերում մեկ այլ տղամարդու կողմից ֆիզիկական բռնության ենթարկվելը կամ սպանվելն է, կանանց նկատմամբ բռնությունը հիմնականում տեղի է ունենում իրենց զուգընկեր տղամարդկանց կամ ընտանիքի անդամների կողմից ոչ հանրային վայրերում, և որպես կանոն, ներառում է շարունակական նվաստացումներ տանը, սպառնալիքներ կամ ահաբեկում, դաժան վերաբերմունք և խոշտանգումներ, սեռական բռնություն,ինչպես նաև իշխանության բաշխման ծայրահեղ անհամամասնություն (ՄԱԿԹՀՊԳ[4] - 2011, ԱՀԿ[5] -2012):

Կնասպանություն եզրը օգտագործվում է նկարագրելու կանանց և աղջիկների կնատյաց սպանությունները, որոնց դրդապատճառը տղամարդկանց՝ սեփական գերազանցության և կանանց սեփականատերը լինելու սոցիալապես ամրագրված համոզմունքն է (ԱՀԿ 2012 թ.):

[3] [Ծան. թարգմ.] ՄԱԿ-ի համակարգի գիտական խորհուրդ, պաշտոնական կայք՝ http://acuns.org

[4] [Ծան. թարգմ.] ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակ (ՄԱԿԹՀՊԳ)

[5] [Ծան. թարգմ.] Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

Որպեսզի սպանությունը որակվի ֆեմիցիդ (կնասպանություն), հանցավոր մտադրության, սպանության և զոհի գենդերի միջև պետք է կապ լինի (ՄԱԿ ԳԽ 2013):

Այս սպանությունները կարող են նաև անուղղակի լինել, քանի որ երկարատև բռնության անտանելիությունը հաճախ զոհերին հարկադրում է ինքնասպանության (ՄԱԿ ԳԽ 2013):
Ամբողջ աշխարհում յուրաքանչյուր տարի մոտավորապես 66 000 կին և աղջիկ է բռնությամբ սպանվում, որը կազմում է բոլոր դիտավորյալ սպանությունների զոհերի թվի 17% -ը (ՄԱԿ ԳԽ 2013):

Չնայած մարդասպանությունների ընդհանուր թվի անկում է արձանագրվել համաշխարհային մակարդակով, դրա հիմնական պատճառը տանից դուրս սպանվող տղամարդկանց թվի աստիճանական նվազումն է (ՄԱԿԹՀՊԳ 2011): Այսպիսով, սա հիմք է ենթադրելու, որ կնասպանությունը կազմում է բոլոր մարդասպանությունների առավել մեծ մասնաբաժինը, և կանայք անհամաչափորեն են տուժում ընտանիքի կամ զուգընկերոջ բռնությունից (ՄԱԿԹՀՊԳ 2011):

Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ Եվրոպայում մարդասպանությունների զոհ դարձած կանանց 35%-ը սպանվել է զուգընկերների կամ նախկին զուգընկերների, իսկ 17%-ը՝ հարազատների կողմից, մինչդեռ բոլոր տղամարդկանց միայն 5%-ն է սպանվել զուգակցի կամ նախկին զուգակցի և 10%-ը՝ ընտանիքի այլ անդամների կողմից (ՄԱԿԹՀՊԳ- 2011):

Աշխարհի տարբեր շրջաններում իրավիճակը նույնն է. ըստ առկա տվյալների՝ իգական սեռի սպանությունների դեպքերի 40-70 %-ը կա՛մ կապված է զուգընկերների

հետ, կա՛մ առնչվում է ընտանեկան բռնությանը: Կնասպանությունը խորապես արմատավորված է հասարակության ներսում իշխանության՝ պատմականորեն անհավասար բաշխման ակունքներում, անքակտելիորեն կապված է վնասակար գենդերային կարծրատիպերի և բռնությունը օրինականացնող ինստիտուցիոնալ խոչընդոտների հետ:

Ավելի հաճախ բռնություն տեղի է ունենում այնպիսի միջավայրերում, որտեղ գենդերային բռնությունն ընդունված և սովորական հասարակական նորմ է, իսկ իշխանության ամենաբարձր մակարդակներում բացակայում է մեղավորներին պատասխանատվության ենթարկելու քաղաքական կամքը (ՄԱԿ ԳԽ 2013):

Այսպիսով, կնասպանության մասին խոսելիս դիտարկվում են ոչ միայն առանձին միջադեպերը, այլև՝ նման սպանությունները խրախուսող ու բռնությունը հավերժացնող շարունակական համակարգը:

ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵԶՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Չնայած այս երևույթը գոյություն ունի դեռ անհիշելի ժամանակներից՝ «կնասպանություն» եզրը շրջանառության մեջ է դրվել 1970-ականների ֆեմինիստական շարժումների ընթացքում Ամերիկացի գրող Քեռոլ Օռլոքի կողմից և լայնորեն սահմանվել որպես կանանց սպանություն (Ջոսի Քայե [Josie Kaye], 2007):

1976 թ.-ին ֆեմինիստ գրող Դայան Ռասելը Կանանց նկատմամբ հանցագործությունների տրիբունալի առաջ հրապարակեց կնասպանություն եզրը, և սահմանեց այն որպես «արական սեռի կողմից իգական սեռի սպանություն վերջիններիս լոկ այդ սեռին պատկանելու պատճառով», շեշտադրելով այդ արարքների հիմքում առկա սեքսիստական շարժառիթները՝ դրդված կնատյացությամբ, արական սեռի՝ իգականի հանդեպ կեղծ գերակայությամբ, սեռական հաճույքների կամ կանանց նկատմամբ ենթադրյալ սեփականատիրական նկրտումներով (Ռասել Դայանա Է.Հ և Հարմես, Ռոբերտա Ա [Russell, Diana E.H. and Harmes, Roberta A], 2001):

Այնուամենայնիվ, Ռասելի կնասպանության սահմանումը ոչ միանշանակ է ընդունվել գիտնականների շրջանում և տարբեր մշակութային համատեքստերում տարբեր սահմանումներ են քննարկվում:

Որոշ գիտնականներ ընդգծում են, որ կնասպանություն եզրը կիրառելու համար անհրաժեշտ է ցույց տալ միտումնավորությունը,այսինքն, որ տղամարդը կանխամտածված է սպանել կնոջը (Էլլիս Դեսմոնդ և Ուոլթեր Դիքիսեդերի [Ellis, Desmond and Walter Dekesedery],1996): Մյուսները, ի տարբերություն,

պնդում են, որ շարժառիթը միշտ չէ, որ գործնականում հնարավոր է չափել, և որպես այդպիսին, կնասպանություն եզրը պետք է օգտագործել այն դեպքերում, երբ դիտավորությունը ենթադրվում է, սակայն հնարավոր չէ որոշել (Քեմբել Ջ. և Ռանյըն Ու. [Campbell, J., and C. W. Runyan, 1998):

Ավելին, վերջին տարիներին, գիտնականները կնասպանության սահմանման շրջանակներում սկսել են ներառել նաև կանանց կողմից իրագործված կնասպանության դեպքերը՝չնայած այդ երևույթի համեմատական հազվադեպությանը (Ռասել Դայանա Է.Հ և Հարմես, Ռոբերտա Ա [Russell, Diana E.H. and Harmes, Roberta A], 2001):

Ըստ Վիեննայի 2012 թ.-ի կոնվենցիայի՝ կնասպանությունը սահմանվում է որպես կանանց և աղջիկների՝ իրենց գենդերի պատճառով սպանություն, որը կարող է ունենալ հետևյալ դրսևորումները.
1) կանանց սպանություն զուգընկերոջ կողմից, 2) խոշտանգումներով և կնատյացությամբ զուգորդված սպանություն, 3) «պատվի» համար կամ պատվի պատրվակով կանանց և աղջիկների սպանություններ, 4) զինված հակամարտություններում կանանց և աղջիկների նպատակային սպանություն, 5) կանանց՝ օժիտին վերաբերող հարցերի պատճառով սպանություն, 6) կանանց և աղջիկների՝ իրենց սեռական ուղղության ու գենդերային ինքնության պատճառով սպանություն, 7) տեղաբնիկ և ցեղաբնակ կանանց և աղջիկների՝ իրենց գենդերի պատճառով սպանություն 8) իգական սեռի պտղի և նորածինների սպանություն՝ նրանց սեռի պատճառով, 9) կանանց սեռական օրգանների խեղման հետևանքով առաջացած մահ, 10) կախարդություն կամ հմայություններ անելու մեղադրանքով կանանց սպանություն, 11) կանանց և աղջիկների սպանություն

կազմակերպված հանցավորության, թմրամիջոցների գործարքների, մարդկային թրաֆիքինգի և մանր զենքերի տարածման հետ առնչություն ունեցող խմբերի կողմից (ԱԹՀԳ 2013):

Սույն զեկույցում կիրառվում է կնասպանության ավելի լայն սահմանումը, որը կնասպանություն է որակում կանանց և աղջիկների ցանկացած սպանություն: Զեկույցի հեղինակները գիտակցում են, որ կնասպանության ոչ բոլոր դեպքերն են իրագործվում ներկա կամ նախկին զուգընկերների կամ ընտանիքի անդամների կողմից, սակայն հաշվի առնելով Հայաստանում վիճակագրական տվյալների բացակայությունը՝ զեկույցում վավերագրել են միայն ընտանեկան սպանության դեպքերը:

ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կոալիցիայի անդամները կազմակերպել են հանրային միջոցառում՝ ընտանեկան բռնության զոհերի հիշատակը հարգելու և հանրային իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով:

Ընտանեկան բռնությունը, որը լայնորեն տարածված է հայաստանյան իրականության մեջ, վտանգավոր գենդերային նորմերի ու կարծրատիպերի առավել ցայտուն դրսևորումն է:

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) պատվերով «Պրոակտիվ հասարակություն» իրավապաշտպան ՀԿ-ի կողմից 2011 թ. իրականացված հետազոտության արդյունքների համաձայն՝ հետազոտության իրականացման պահի

դրությամբ հարցված կանանց 60%-ը իրենց կյանքի ընթացքում ենթարկվել էր մեկ կամ մի քանի տեսակի ընտանեկան բռնության , իսկ գրեթե 40%-ը՝ կյանքի վերջին երկու տարիների ընթացքում (ԵԱՀԿ 2011թ.): 2015 թ. Հայաստանի անվտանգության մարմիններն արձանագրել են 784 ընտանեկան բռնության հաղորդում: Այս թիվը չի ներառում ոչ որպես «անհաշտ ընտանիքներ» որակված, ոչ էլ ընդհանրապես հաղորդում չներկայացրած դեպքերը:

Միայն կոալիցիայի անդամ կազմակերպությունները տարեկան 2000-ից ավել ընտանեկան բռնության ահազանգ են ստանում: Հաշվի առնելով կանանց նկատմամբ բռնության հաղորդումների ցածր մակարդակը՝ տանը բռնության ենթարկվող կանանց փաստացի թիվը համարվում է զգալիորեն ավելի մեծ:.

Վերջին հինգ տարիների ընթացքում ներկա կամ նախկին զուգընկերոջ կողմից առնվազն 30 կին է սպանվել՝ անմայր թողնելով իրենց երեխաներին: Կանանց սպանությունների անպատժելիությունը համաշխարհային հիմնախնդիր է:

Տվյալները ցույց են տալիս, որ կնասպանության ավելի բարձր ցուցանիշներ գրանցվում են մահաբեր բռնության ամենաբարձր ընդհանուր տվյալներ ունեցող տարածաշրջաններում: Սակայն հետխորհրդային երկրները դուրս են այս համաչափությունից. հետխորհրդային շատ երկրներում կնասպանությունը՝ ի համեմատություն դիտավորությամբ կատարված սպանությունների, անհամամասնորեն ավելի տարածված է (ՄԱԹՀՊԳ 2011, Սմիթ և այլք [Smit et al] 2012):

Ըստ ազգային վիճակագրության թերևս միակ հասանելի տվյալների՝ Հայաստանում 2012թ. հաղորդված դիտավորյալ սպանությունների զոհերի 10.5%-ը կանայք են՝ սպանված զուգընկերոջ կամ ընտանիքի անդամների կողմից, մինչդեռ զուգակցի կամ ընտանիքի անդամների կողմից սպանված տղամարդկանց թիվը զգալիորեն քիչ է՝ 2.9%:

Շատ կարևոր է հաշվի առնել, որ այս թվերը ներկայացնում են միայն փաստագրված դիտավորյալ սպանությունները, և չեն ներառում չհաղորդված կամ որպես դիտավորյալ սպանություն չորակված դեպքերը:

Բռնության մահաբերության ռիսկային գործոնները

Բռնության ենթարկված կանանց մահն անկանխատեսելի, եզակի, առանց նախազգուշացման ու նախապատմության միջադեպ չէ: Այս զեկույցում ներկայացված սպանության դեպքերի զոհերի մեծ մասը օգնության է դիմել ընտանիքին, ընկերներին կամ պետական մարմիններին:

Մինչդեռ ընտանեկան բռնության՝ հասարակությունում ընդունված լինելու մշակույթը, զուգընկերոջը լքելու խարանը և համակարգային աջակցության բացակայությունն ապահովել են բռնության շարունակելիությունը ու, ի վերջո, հանգեցրել սպանության:

Այս զեկույցում հատուկ ուշադրության են արժանացել ոլորտի հետազոտողների կողմից բացահայտված ռիսկերը, որոնք կարող են մահվան պատճառ հանդիսանալ: Թեպետ անհնար է հստակ կանխատեսել,

թե երբ ծեծը մահվան պատճառ կդառնա, գոյություն ունեն լավ փաստագրված և կնասպանությունը բնորոշ մի շարք գործոններ:

Մենք կենտրոնացել ենք նախազգուշացնող նշանների վրա, որոնք քննված դեպքերն ուսումնասիրելիս պարբերաբար կարևորվել են, և որոնց անդրադառնալու դեպքում հնարավոր կլինի նվազեցնել ընտանեկան բռնությամբ պայմանավորված մահերը Հայաստանում: Այդ նշանների թվում են բռնարար վարքի դրսևորման պատմությունը, բռնարարին լքելու զոհի փորձերը, զոհին սպանելու՝ նախկինում հնչեցված սպառնալիքները և բռնարարի վերահսկող ու սեփականատիրական վարքի դրսևորումը:

Թեև կնասպանության յուրաքանչյուր դեպքին հատուկ են եղել իր եզակի հանգամանքները, վերոնշյալ գործոնները առկա էին զուգընկերոջ կողմից կատարված բոլոր ընտանեկան սպանություններում: Եվ այդ հանգամանքները, համընդգրկուն ցանկ չկազմելով հանդերձ, մտնում են բռնարարության և զոհարկության հիմնական ռիսկային գործոնների մեջ:

Հանրային տեղեկատվության ու զոհերի մտերիմների հետ հարցազրույցների ավելի ամբողջական վերլուծությունը, հավանաբար, ավելի շատ տեղեկատվություն կբացահայտի այդ և նմանատիպ այլ դեպքերի մասին, որոնք հնարավոր կլինի օգտագործել հանրային քաղաքականության և միջամտության ռազմավարություններ մշակելիս:

Բռնության նախադեպեր

Բռնարարի՝ նախկինում ևս բռնություն կիրառելու փաստերը համարվում են մարդասպանություն գործելու ամենաբարձր ռիսկային ցուցանիշներից: Կանայք, ովքեր հարաբերությունների մեջ են մտնում քրեական անցյալ կամ այլ զուգընկերներին բռնության ենթարկած բռնարարների հետ, բռնության առավել բարձր և մասնավորապես մահաբեր հարձակման զոհ դառնալու վտանգի են ենթարկվում:

Ինչպես փաստում են ոստիկանական արձանագրությունները, ընտանիքի, ընկերների կամ վկաների հետ հարցազրույցները, ընտանեկան բռնության հետևանքով սպանության 30 արձանագրված դեպքերից գրեթե բոլորում բռնարարը նախկինում ևս դրսևորել է բռնարար վարք:

Կոալիցիայի անդամները անցկացնում են մոմավառություն՝ ի հիշատակ ընտանեկան բռնության զոհերի, հոկտեմբերի մեկ՝ Ընտանեկան բռնության դեմ պայքարի ազգային օր

Հարաբերությունների խզում

Ըստ ընդունված պատկերացումների՝ բռնարարից հեռանալով՝ բռնության ենթարկված կինը անվտանգության մեջ կհայտնվի, մինչդեռ իրականում հարաբերություններն ավարտելը երբեմն արագացնում է բռնության վերջին ակտը՝ հանգեցնելով զոհի մահվան: Պատճառն այն է, որ բռնարարն էլ ավելի է ուժեղացնում զոհի հանդեպ ունեցած իր ուժն ու վերահսկողությունը, երբ վերջինս սպառնում կամ փորձում է հեռանալ: Հետևաբար, կնոջ համար ամենավտանգավոր պահն այն է, երբ նա փորձում է հեռանալ բռնարարից:

Ընտանեկան բռնության հետևանքով սպանության 30 արձանագրված դեպքերի զոհերից առնվազն չորսը սպանության պահին կա՛մ փորձել էին հեռանալ, կա՛մ արդեն իսկ ավարտել էին հարաբերությունները բռնարարի հետ:

20-ամյա Մարո Գուլոյանը՝ իր բռնարար ամուսնուց բաժանվելու մասին հստակ հայտարարելուց հետո ընդամենը մի քանի ժամ անց, մահացել էր: Չնայած իշխանությունները այս դեպքը դիտարկել են որպես կախվելու միջոցով ինքնասպանություն, Մարոյի ընտանիքը և իրավապաշտպանները միահամուռ պնդում են, որ դա կնասպանության դեպք է, քանի որ մարմնի վրա կախվելու նշանների փոխարեն առկա են եղել ամենայն հավանականությամբ ամուսնու մատնահետքերը՝ թողնված նրան խեղդամահ անելիս (ՀԱԲ 2016 թ.):[6]

6 [Ծան. թարգմ.] Հայկական դատական համակարգը այդպես էլ չի քննել Մարո Գուլոյանի սպանության դեպքը, որի արդյունքում «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ն այս գործով դիմել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Գործը դեռ ընթացքի մեջ է:

Վերահսկող կամ սեփականատիրական վարք

Բռնարարի մանիպուլյատիվ, այդ թվում ամբողջովին վերահսկող կամ սեփականատիրական վարքի դրսևորումը, նրա՝ մարդասպանության ունակ լինելու մեկ այլ նախազգուշացնող նշան է:

Տղամարդը, իրեն իր զուգակցի սեփականատերը զգալիս, ինչը տարածված է ավանդական հասարակություններում, հատկապես զուգակցին կորցնելու վախ ունենալու դեպքում կարող է խելագարության աստիճանի սրված սեփականատիրական վարք դրսևորել: Հատկանշական է, որ կնասպանության արձանագրված դեպքերի, եթե ոչ բոլոր, ապա մեծամասնության պարագայում, առկա է եղել բռնարարի վերահսկող կամ սեփականատիրական վարք:

Սպանության սպառնալիքներ

Նախկինում հնչեցված սպանության սպառնալիքները մահվան վտանգի մասին նախազգուշացնող ուժեղագույն գործոններից են: Հայտնի է, որ արձանագրված դեպքերից մի քանիսում բռնարարները նախկինում ևս սպառնացել էին սպանել զոհերին:

Զարուհի Պետրոսյանը լքել էր իր բռնարար ամուսնուն, որպեսզի ապրի քրոջ հետ: Հենց այդ ժամանակ էր ամուսինը այցելել քրոջ տուն և առանձին դաժանությամբ բռնության ենթարկել կնոջը: Զարուհին՝ գլխի վնասվածքով, կոտրվածքներով և ամբողջ մարմինը կապտուկներով պատված, մահացել էր հիվանդանոցում՝ ներգանգային արյունահավաքից (հեմատոմա): Ըստ Զարուհու քրոջ՝ նրա բռնարար ամուսինը

հաճախ պարծենում էր իր զարմիկով, ով էջմիածնի ոստիկանությունում բարձրաստիճան պաշտոնյա էր, ասելով, որ իր կնոջ հետ կարող է անել ինչ կամենա, իսկ ցանկության դեպքում կարող է նույնիսկ սպանել (ՀԱԲ 2016 թ.):

Ընտանեկան բռնության մշակութային ընկալումը

Մշակութային նորմերը և վարքագծի ակնկալիքները հաճախ խրախուսում են բռնությունը և կարող են մահաբեր լինել: Հայկական համատեքստում ընտանեկան բռնությունն ընդունված արժեք է մշակութային մակարդակում և հաճախ դիտարկվում է որպես միակ ընդունելի ու «հային հարիր» վարքագիծ:

Օրինակ՝ Կոալիցիայի գրանցած դեպքերից շատ զոհերի ծնողներ ու հարազատներ հետ են պահել իրենց աղջիկներին բաժանվելուց՝ հասարակությունում «առանց տեր», կամ «առանց ամուսին չմնալու» հիմնավորումներով: Իսկ շատ բռնարար ամուսիններ դատարանում և լրագրողների հետ շփվելիս բացատրում են իրենց բռնարար վարքը հայ տղամարդուն հարիր պահվածք ցուցաբերելու արդարացումով. «բա իմ փոխարեն, որ մի հայ տղեն տենց բան չէր անի» արտահայտությունը ամենատարածվածներից է: Սա բացատրվում է մշակութային նորմերի վտանգավոր աստիճանի օրինականացմամբ, ինչն էլ հանգեցնում է մահաբեր բռնության:

2010-2015 թթ.-ին առնվազն 30 կին է սպանվել զուգընկերոջ կամ ընտանիքի անդամների կողմից:

2010-2015 ԹԹ. ԱԿՆԱՐԿ

Ստորև ներկայացված տվյալները հավաքագրվել են «Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ի Արագ արձագանքման խմբի գործունեության շրջանակում մամուլում հրապարակումների հիման վրա: Դրանք ներկայացնում են 2010-2015 թթ. արձանագրված կնասպանության մեզ հայտնի 28 դեպքերի նկարագրություններն ու այդ դեպքերից բոլորին բնորոշ կարևոր միտումները:*

Ներկայացուցչական ուսումնասիրությունների, ինչպես նաև սպանությունների, ոստիկանական, հիվանդանոցային, դատական և դիահերձարանային ճշգրիտ վիճակագրության բացակայության պատճառով, զեկույցը սահմանափակված է թերթերի հոդվածներից ստացված տվյալներով:

Այսպիսով, ներկայացված տվյալներն ընտանեկան բռնությունների հետևանքով սպանությունների իրական թվի թերի հաշվառմամբ ու ոչ լիարժեք ներկայացումն է, քանի որ զեկույցում չեն ներառվել որպես ինքնասպանություն ու դժբախտ պատահար սխալ որակում ստացած կամ կարճված գործերը: Ավելին, ներկայացած դեպքերը ընտանեկան բռնության կամ զուգընկերոջ կողմից բռնության արդյունք են, սակայն հնարավոր է, որ կան կնասպանության այլ դեպքեր, որոնք ներկայացված չեն այստեղ:

Զարուհի Պետրոսյան (1990-2010). մեկ դստեր մայր, որը Զարուհին ապրել է իր ամուսնու և նրա ընտանիքի հետ Արարատի մարզի Մասիս քաղաքում: Նա ամուսնու և սկեսրոջ կողմից անընդմեջ բռնությունների է ենթարկվել: Փորձել է լքել ամուսնուն, սակայն վերջինս գտել է նրա բնակվելու վայրը և վայրենաբար բռնության ենթարկել: Զարուհու ստացած հարվածները հանգեցրել են ուղեղի արյունազեղման, մատերը կոտրվել են, իսկ ողջ մարմինը եղել է կապտուկների մեջ : Մի քանի օր անց Զարուհին մահացել է հիվանդանոցում՝ գլխի վնացվածքների արդյունքում առաջացած ներգանգային հեմատոմայից: Զարուհու դեպքը առաջինն էր, որ լայնորեն լուսաբանվեց ԶԼՄ-ների և բուռն հակազդեցություն առաջացրեց քաղաքացիական հասարակության կողմից: Նրա ամուսինը դատապարտվել է 10 տարի ազատազրկման, և մինչ այժմ կրում է պատիժը:

Մարո Գուլոյան (1992-2012). Մարոն, ով ուներ երկու տարեկան դուստր և հղի էր երկրորդ զավակով, ապրել է իր բռնարար ամուսնու հետ Կոտայքի մարզի Առինջ գյուղում: Մահից ընդամենը մի քանի ժամ առաջ Մարոն հայտարարել էր, որ վերջնականապես խզում է հարաբերությունները բռնարար ամուսնու հետ: Մարոյի

մահը որակվել է որպես ինքնասպանություն, սակայն գոտիով կախվելու ոչ մի ապացույց չի հայտնաբերվել: Փոխարենը, նրա պարանոցին հայտնաբերված մատնահետքերը վկայում են այն մասին, որ նա խեղդամահ է եղել ամենայն հավանականությամբ իր ամուսնու կողմից, ով, ըստ որոշ տեղեկությունների, օգտագործելով ԱԺ պատգամավորների հետ իր ազգակցական կապերը՝ ազատվել է պատժից:

Մարիամ Սարգսյան (1975-2012). Մարիամը սպանվել է իր Երևանյան բնակարանում՝ ամուսնու հետ վեճից հետո: Վերջինս հուշանվեր դանակով դանակահարել էր նրան մինչև մահ: Այլ տեղեկություն հայտնի չէ ո՛չ Մարիամի, ո՛չ էլ դեպքի մասին:

Անահիտ Բաբայան (1962-2012). երեք երեխաների մայր Անահիտը իր բռնարար ամուսնու հետ ապրել է Վայոց Ձորի Աղավնաձոր գյուղում: Նրա ամուսինը օգտագործել էր բետոնե սալաքար և փայտե ձող իրենց իսկ պարտեզում նրան սպանելու համար, և դատապարտվել 10 տարվա ազատազրկման:

Անժելա Դաշյան (1987-2012). երկու երեխաների մայր Անժելային սպանել էր ամուսինը Գեղարքունիքի մարզի Կախակն գյուղի իրենց տանը սիրուհու շուրջ ծագած բուռն վեճի ընթացքում: Ամուսինը խոհանոցի դանակով կտրել էր Անժելայի վիզը և փորձել փախչել, սակայն բռնվել էր հարևանի կողմից և ոստիկանության բաժանմունքում խոստովանել հանցանքը՝ դատապարտվելով 12 տարվա ազատազրկման: Փորձելով արդարացնել իր վարքը, ամուսինը ասել էր. «Սպանել եմ կնոջս, որովհետև խանդում էր»: Իսկ Անժելայի մայրը իր ցուցմունքում վկայել էր, որ նա վաղուց էր պլանավորում սպանել Անժելային՝ հրահանգելով զանգահարել ու հրաժեշտ տալ բարեկամներին մինչև մահանալը:



Դիանա Նահապետյան (1977-2012). Արարատ մարզի Արարատ քաղաքում բնակվող երկու դստերերի մայր Դիանայի ամուսինը ծաղկամանով մի քանի հարվածՀ էր հասցրել, ապա դանակի 21 հարվածով դաժանաբար սպանել նրան՝ իր երեխաների աչքի առաջ: Վերջերս տեղի ունեցած քրեական դատավարության ընթացքում, նրա ամուսինը դատապարտվեց ընդհամենը երեք տարի ութ ամիս ազատազրկման, քանի որ դատախազը՝ հենվելով փորձագետի՝ դեպքից 3 տարի անց կատարած կրկնակի փորձաքննության եզրակացության վրա, որը կտրականապես տարբերվում էր առաջին փորձաքննությունից և ամբողջովին հիմնված էր միայն ամբաստանյալի խոսքերի վրա, ինչպես նաև ուներ այնպիսի բնութագրեր, ինչպես «Դիանան ներկայացել էր՝ որպես համարյա իդեալական կին» և այլն, զրպարտել էր Դիանային ամուսնական դավաճանության մեջ, և նշել, որ ամուսինը խանդի հետևանքով գտնվել էր «ոչ սթափ հոգեվիճակում» և կատարել սպանությունը:

Վարդուշ Ղարախանյան (անհայտ-2013) և Ջեմֆիրա Մաճակյան (անհայտ-2013). Վարդուշին և Ջեմֆիրային սպանել է նույն հանցագործը՝ Վանաձորի իրենց տանը: Գիշերը հանցագործը կացնով հարվածներ է հասցրել Վարդուշի գլխին, պարանոցին և կրծքին: Ջեմֆիրային հանցագործը սպանել է նույն կերպ, երբ նա փորձել է օգնել իր սկեսրոջը: Դատաբժշկական հետազոտությունն իրականացվել է, իսկ դեպքի հետաքննությունը շարունակվում է:

Ցողիկ Այվազյան (1986-2013). Շիրակի մարզի Արթիկ գյուղում բնակվող Ցողիկը խեղդամահ է եղել: Մենք հավատում ենք, որ սա կնասպանության դեպք է: Նրա դեպքի մասին այլ տեղեկություններ հայտնի չեն:

Անունն անհայտ (1986-2013)[7]. Շիրակի մարզում տեղի ունեցած կնասպանության այս զոհին իրենց խոհանոցում ծեծել և խեղդամահ է արել ամուսինը: Կինը դանակի օգնությամբ ինքնապաշտպանության անհաջող փորձ է արել: Այս գործի վերաբերյալ քրեական գործ է հարուցվել, սակայն դատավճիռ դեռևս չի կայացվել:

Անունն անհայտ (1983-2013)[8]. Կոտայքի մարզի Ակունք գյուղում բնակվող այս կնոջը դանակահարել է իր ամուսինը: Նրանց երկու դստրերը, ցավոք, ներգրավվելով վիճաբանությանը, նույնպես վիրավորվել են դանակի հարվածներից, բայց ի տարբերություն իրենց մոր, ողջ են մնացել: Ենթադրվում է, որ հանցագործը հոգեկան առողջության խնդիրներ է ունեցել:

Լուսինե Դավթյան (1977-2013). Արմավիրի մարզի Մուսալեռ գյուղի բնակիչ, երկու երեխաների մայր Լուսինեին դանակահարել է ամուսինը՝ իրենց դստեր ներկայությամբ, երբ Լուսինեն փորձել է վերջապես խզել ֆիզիկական և հոգեբանական բռնությամբ հարաբերությունները:

[7] [ծան. թարգմ.] Տվյալների բազայում դեպքը հաշվագրվել է մամուլի հրապարակման միջոցով, որտեղ չի նշվել զոհի անունը:

[8] Նույնը

Քրեական գործ է հարուցվել՝ չնայած հանցագործի ընտանիքը փորձում է մեղմացնել պատիճը՝ ապացուցելով, որ սպանության պահին նա անմեղսունակ է եղել:

Աննա Ավետիսյան (1985-2013). Աննան իր ամուսնու հետ ապրել է Արարատի մարզի Ուրցաձոր գյուղում: Վիճաբանության արդյունքում ամուսինը խեղդամահ է արել Աննային, և ապա վնասել ինքն իրեն: Քրեական գործ է հարուցվել նրա դեմ, սակայն գործի հանգուցալուծումը դեռ անհայտ է:

Գոհար Չիլինգարյան (անհայտ-2013). Գոհարը սպանվել է իր երևանյան տանը՝ իր մինուճար որդու՝ հարբած վիճակում գլխին հասցված հարվածներից, երբ փորձել է համոզել վերջինիս, որ այլևս ալկոհոլ չգնի: Որդու դեմ հարուցվել է քրեական գործ, բայց այս պահին դատավճիռը դեռ չի կայացվել:

Նելլի Աղայան (1959-2013). չորս երեխաների մայր Նելլին սպանվել է իր ամուսնու կողմից հասցված դանակի 18 հարվածից՝ Սյունիքի մարզի Ագարակ գյուղի իրենց տանը: Թեպետ բռնությունների վերաբերյալ ոստիկանությանը մի քանի բողոք է ներկայացրել, նրա անվտանգությունն ապահովելու համար ձեռնարկված միջոցներն անբավարար են եղել: Ամուսնու դեմ հարուցվել է քրեական գործ, բայց դատավճիռը դեռ չի կայացվել:

Հասմիկ Զաքարյան (1988-2014). երկու երեխաների մայր Հասմիկին խեղդամահ է արել իր ամուսինը, ով աշխատում էր զինված ուժերում: Հասմիկը բնակվել է Տավուշի մարզի Տավուշ գյուղում: Այս դեպքի վերաբերյալ այլ տեղեկություն հայտնի չէ:

Օֆելյա Մովսեսյան (1960-2014). երկու երեխաների մայր Օֆելյային սպանել է իր նախկին ամուսինը՝ այրելով

նրան Արմավիրի մարզի Արարատաշեն գյուղում գտնվող իր տան հետ: Փորձելով փրկել Օֆելյային՝ նրա ներկայիս (երկրորդ) ամուսինը ևս վնասվել էր: Հարուցվել է քրեական գործ, բայց դատավճիռը դեռ չի կայացվել:

Արաքսյա Մարտիրոսյան (1979-2014). երկու երեխաների մայր Արաքսյային սպանել է իր ամուսինը՝ Արմավիր մարզի գյուղի գերեզմանատանը՝ քարով հարվածելով մարմնի տարբեր հատվածներին և կտրելով կոկորդը: Հարուցվել է քրեական գործ, բայց դատավճիռը դեռ չի կայացվել: Հանցագործի ընտանիքը փորձում է մեղմացնել առաջադրված մեղադրանքը՝ պնդելով, որ սպանության պահին հանցագործը եղել է հոգեպես անկայուն վիճակում:

Ժենյա Հարությունյան (1971-2014). Ժենյա Հարությունյանին սպանել է ամուսինը այգու փոցխով մարմնին բազմաթիվ հարվածներ հասցնելու և գլխին մետաղյա ձողով հարվածելու միջոցով: Նա ապրում էր Արմավիրի մարզի Մայիսյան գյուղում: Չնայած ամուսինը մեղավոր է ճանաչվել, բայց պատիժը դեռ առկախված է:

Լիանա Մանուկյան (1986-2014). Գյումրիում բնակվող Լիանան, ով մեկ երեխայի մայր էր, սպանվել է իր մանկահասակ տղայի ներկայությամբ, ամուսինու՝ պարանոցի և կրծքավանդակի հատվածում հասցրած դանակի 16 հարվածներից, սոցիալական ցանցում գրանցվելու պատճառով: Ամուսնու գործողությունների դիտավորությունը ցուցադրում է այն փաստը, որ

դանակահարության արդյունքում առաջին դանակը կոտրվելուց հետո նա վերցրել է երկրորդը: Հարուցվել է քրեական գործ, բայց դատավճիռը դեռ չի կայացվել:

Հերմինե Չիլինգարյան (1984-2014). երեք զավակների մայր Հերմինեին խեղդամահ է արել ամուսինը, ով պայմանագրային զինծառայող էր Տավուշի մարզի Իծաքար գյուղում: Այս դեպքի վերաբերյալ մանրամասներ հատնի չեն:

Վարդուհի Գրիգորյան (անհայտ-2014). Վարդուհու ամուսինը՝ երկու անգամ կրակելով՝ իր մեքենայում սպանել է նրան , այնուհետև մարմինը թաղել Արարատի մարզի Կյուրին գյուղի մոտակայքում գտնվող տնակի մերձակայքում: Այլ տեղեկություններ այս դեպքի վերաբերյալ հայտնի չեն:

Ալվինա Դարբինյան (1949-2014). Երևան քաղաքի Շենգավիթ համայնքում բնակվող տարեց Ալվինան որդու կողմից բազմաթիվ մահացու հարվածներ է ստացել գլխի շրջանում: Վերջինս մեղադրանք է առաջադրվել, բայց դատավճիռը դեռ չի կայացվել:

Ջուլիետա Եղիշյան (1952-2014). Ջուլիետային սպանել էր ամուսինը Տավուշի մարզի իրենց տան ննջասենյակում: Հարուցվել է քրեական գործ, բայց դատավճիռ դեռևս չի կայացվել:

Մելանիա Պողոսյան (անհայտ-2014). Երևանի Էրեբունի վարչական շրջանից երկու զավակների մայր Մելանյան սպանվել էր ամուսնու կողմից, ով ինքնասպանության փորձ էր արել: Նրա ամուսնու գործով դատավարությունն ընթանում է:

Մելանյա Պողոսյան (անհայտ-2014). մեկ երեխայի մայր Մելանյային դանակահարելով սպանել էր ամուսինը: Հարուցվել է քրեական գործ, սակայն դատավճիռ դեռ չի կայացվել:

Անահիտ Զաքևոսյան (1964-2015). Ծակող գործիքի բազմաթիվ հարվածներից սպանված Անահիտի դին հայտնաբերվել էր Արմավիրի մարզի Փարաքար գյուղի իր տանը: Մարդասպանը դեռևս հայտնի չէ:

Հեղինե Դարբազյան (1977-2015). երկու երեխաների մայր Հեղինեն բնակվել է Երևան քաղաքում, ենթարկվել է հոգեբանական և ֆիզիկական բռնության իր ամուսնության ողջ ընթացքում: Մի քանի անգամ դիմել է ոստիկանությանը, սակայն համապատասխան օգնություն չի ստացել: Մինչև աշխատավայրում ամուսինու կողմից դանակահարվելը, մեկ տարի առաջ բաժանվել էր նրանից: Սպանության գործով կատարվել է հետաքննություն, իսկ վերջերս էլ սկսվել են դատական լսումները:

***Ի գիտություն:** Հարկ է նշել, որ սույն զեկույցում ներկայացված դեպքերը վերցված են մամուլում հրապարակումներից և ընդհանուր առմամբ կնասպանություն են որակվել քաղաքացիական հասարակության կողմից: Հետևաբար, բոլոր դեպքերը՝ հստակ որպես կնասպանություն, զեկույցի հեղինակները չեն կարող որակել, քանի որ դեպքերի ճնշող մեծամասնությունը դեռ դատաքննական փուլում է և դատարանի օրինական վճիռ չի կայացվել: Հետևաբար Կոալիցիան՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածով սահմանված անմեղության կանխավարկածը, կոչ է անում՝ հետագայում այս դեպքերին հղում տալու պարագային, անպայման ստուգել դատավճիռը datalex.am դատական տեղեկատվական համակարգում:

2010 թ.-ից ի վեր կնասպանության մեջ մեղադրվողների ճնշող մեծամասնությունը դեռևս չեն դատապարտվել կամ ազատազրկվել:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՒՄ **ՄԱՀՎԱՆ ՊԱՏՃԱՌԸ**

ԴԱՆԱԿԱՀԱՐԵԼ/ ՎԻՃԸ ԿՏՐԵԼԸ	12	
ԾԵԾԸ ԲՈՒԹ ԱՌԱՐԿԱՅՈՎ	7	
ԽԵՂԴԱՄԱՀ ԱՆԵԼԸ	5	
ԱՆՀԱՅՏ	4	? ? ? ?
ՎԱՌԵԼԸ	1	
ԿՐԱԿԵԼԸ	1	

ԲՌՆԱՐԱՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ԱՊՐՈՒՄ Է ԲՌՆԱՐԱՐԻ ՀԵՏ ՆՈՒՅՆ ՏԱՆԸ	21	
ՓՈՐՁՈՒՄ Է ԽՋԵԼ ՀԱՐԱԲԵՐՈՒ–ԹՅՈՒՆՆԵՐԸ	4	
ԱՐԴԵՆ ԽՋԵԼ Է ՀԱՐԱԲԵՐՈՒ–ԹՅՈՒՆՆԵՐԸ	3	
ԱՆՀԱՅՏ	2	

ԲՌՆԱՐԱՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՋՈՒՀԻ ՀԵՏ



ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՅՐ

26
ՏԱՆ
ՆԵՐՍՈՒՄ



2
ՏԱՆԻՑ
ԴՈՒՐՍ

2
ԱՆՀԱՅՏ

ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ



63%
ԳՅՈՒՂԱԿԱՆ
ԲՆԱԿԱՎԱՅՐ

37%
ՔԱՂԱՔԱՅԻՆ
ԲՆԱԿԱՎԱՅՐ*

*Այս վիճակագրական տվյալները չեն ներառում անհայտ բնակավայրերում կատարված սպանությունները:

ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԻՆ
ՋՈՀԻ ՏԱՐԻՔԸ



*Այս վիճակագրական տվյալները չեն ներառում անհայտ բնակավայրերում կատարված սպանությունները:

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎՐԱ

ԲՈԼՈՐ ԴԵՊՔԵՐՈՒՄ	**ՆՐԱՆՑ ԵՐԵԽԱՆԵՐԸ**	ԱՌՆՎԱԶՆ **7** ԵՐԵԽԱ
զոհն ու մարդասպանը միասին խնամել են առնվազն մեկ երեխա:	մնացել են առանց մայրական խնամքի:	իր մոր սպանության ականատեսն է եղել, նրանցից երեքը հարձակման արդյունքում վնասվածքներ է ստացել:

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ



ԱՆՀԱՅՏ

ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԽՈՒՍԱՓԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՆԵՐ

ՍԿՍՎԵԼ Է ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐՈՒՑՎԵԼ Է ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ, ԲԱՅՑ ԴԱՏԱՎՃԻՏ ԴԵՌ ՉԿԱ:



ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՆԵՐԻ ԱՋԱՏԱՋՐԿՄԱՆ ՄԻՋԻՆ ԺԱՄԿԵՏԸ **9 ՏԱՐԻ Է**:

Կնասպանությունն ազդում է սպանված կանանց երեխաների ճակատագրի վրա։

ԱՆԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Աշխարհի բոլոր երկրներում տեղի է ունենում կնասպանություն, քանի որ դրանք դեռևս ընդունվում, հանդուրժվում և արդարացվում են: Մինչ կնասպանության առկայությունը վկայում է Հայաստանում կանանց նկատմամբ բռնության մշակույթի տարածվածության մասին, դեռևս նկատելի չեն՝ արդյոք ներդրված են իրական ջանքեր՝բարելավելու գենդերային բռնությունը կանխարգելող և կանանց ու տղամարդկանց միջև հավասարությունն ապահովող ցուցանիշները հայ հասարակության բոլոր ոլորտներում: Ստորև ներկայացվում են կանանց նկատմամբ իրականացվող անարդարությունների ու բռնության շարունակականությանը նպաստող մի շարք խոչընդոտներ՝ ուղեկցված նաև զոհերի անվտանգությունը բարձրացնելու և բռնարարներին պատասխանատվության ենթարկելու հնարավորություն ստեղծող մեխանիզմերի առաջարկություններով, որոնք ի վերջո, միանշանակորեն կնպաստեն ընտանեկան բռնության և դրա պատճառով մահվան դեպքերի նվազմանը:

Ինստիտուցիոնալ աջակցության բացակայություն

Հայաստանում գոյություն չունի կանանց նկատմամբ բռնությունը թիրախավորող և կանխող, ինչպես նաև մեղավորներին պատժող պատշաճ օրենսդրություն: Հաճախ մահվան սպառնալիքներն ու այլ նախազգուշական նշաններն անտեսվում են, քանի որ պետական մարմինների ներկայացուցիչները չունեն համապատասխան

գիտելիքներ ու հմտություններ կամ չեն ցանկանում պատշաճ գնահատել ռիսկերը: Կնասպանության շատ զոհեր որոշ դեպքերում ուղղակի աղերսել են ոստիկանության օգնությունը, սակայն ապարդյուն:

Ժամանակն է, որ պատկան մարմինները սկսեն օգտագործել ընդհանուր իրավիճակի, ինքնասպանության ու մարդասպանության ռիսկերի գնահատման հարցաթերթեր, որոնք ընտանեկան բռնության դեպքերով զբաղվող կենտրոնները արդեն մի քանի տարի է, ինչ կիրառում են: Երկրում գենդերային բռնության շարունակականությանը նպաստում է այն հանգամանքը, որ կնասպանություն իրագործողների մեծ մասը անպատիժ է մնացել կամ ենթարկվել է թեթև պատժի, և միայն մի քանիսն են ազատազրկվել: Հազվադեպ հանդիպող երևույթ չէ, երբ դատարանի դահլիճում հանցագործների պատժաչափը կրճատվել է ի հայտ եկած այնպիսի մեղմացնող հանգամանքների արդյունքում, ինչպիսիք են «ծայրահեղ խանդը» կամ «հոգեկան խիստ հուզմունքի ժամանակավոր վիճակը»:

Վերջերս տեղի ունեցած նման դեպքի օրինակ է 21 դանակի հարվածով ամուսնու կողմից երկու երեխայի ներկայությամբ սպանված Դիանա Նահապետյանի դատավարությունը: Ենթադրվում է, որ դատաբժշկական փորձաքննությունը ծայրահեղ կոռումպացված է եղել, քանի որ ի տարբերություն նախնական փորձաքննության արդյունքների՝ փորձագետի իրականացրած կրկնակի փորձաքննությունը եզրակացրել էր, որ հանցագործը սպանությունը գործել է հոգեկան խիստ հուզմունքի վիճակում:

Ավելին, դատավորները հաճախ ավելի մեղմ պատժատեսակ են սահմանում, եթե երեխաների խնամակալության հարց է ի հայտ գալիս՝ թյուրաբար մտածելով, որ երեխաները պետք է ապրեն իրենց միակ կենդանի կամ ապրելու

համար նյութական ավելի լավ կենսապայմաններ առաջարկող ծնողի հետ, ինչը ևս մեկ անգամ ապացուցում է այս երևույթի մշակույթային սերտաճումը հայ հասարակության սոցիալական պատկերացումների հետ:

Չնայած բռնարարի՝ մահվան հանգեցնող շարունակական բռնարարքներին չկան օրենսդրական կարգավորումներ, որոնք կթույլատրեն կամ պարտադիր կհամարեն վտանգավոր տներից երեխաների հեռացումը նույնիսկ այն ժամանակ, երբ վերջիններիս կյանքին իրական վտանգ է սպառնում: Ցավալի իրողությունն այն է, որ իշխանության շատ ներկայացուցիչներ կա՛մ չեն գիտակցում, կա՛մ կտրականապես դեմ են կանանց իրավունքների վիճակի բարելավմանը: Քաղաքական կամքի բացակայությունն՝ արգելակված կառավարության նման ներկայացուցիչների դիրքորոշմամբ, խրախուսում է համակարգային սեքսիզմը [խմբ. սեռով պայմանավորված խտրական վերաբերմունք] ու անտարբերության և անպատժելիության մթնոլորտը:

2009թ. «Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ-ի նախաձեռնությամբ և տեղական ու միջազգային փորձագետների հետ համագործակցությամբ՝ օրինագիծ էր ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարությանը, որը, սակայն, մերժվել էր: 2010թ. Կոալիցիայի յոթ անդամների միացյալ ջանքերով օրինագծի լրամշակված տարբերակը կրկին ներկայացվել էր ՀՀ կառավարությանն ու Ազգային ժողովին:

2013 թ. ՀՀ արդարադատության նախարարությունը մերժել էր այդ նախագիծը՝ որակելով այն «հակասահմանադրական», մինչդեռ ըստ նախարարության ներկայացուցիչների՝ պատճառն այն էր, որ կառավարությունը չուներ անհրաժեշտ միջոցներ օրենքը կիրարկելու՝ այդ թվում ապաստարաններ բացելու և գործարկելու համար:

Մինչ օրս չկա ընտանեկան բռնությունը կարգավորող օրենսդրություն, և այդ իրավիճակի պահպանումը շարունակում է խոչընդոտել կանանց՝ օգտվելու իրենց անվտանգության ու պաշտպանված լինելու մարդու հիմնարար իրավունքներից:

Ամեն տարի Կոալիցիան օրենքի նախագիծն ընդունելու հորդորով նամակ է ներկայացնում ՀՀ կառավարությանն ու արդարադատության նախարարությանը: Պետությունը միջազգային իրավունքի՝ այդ թվում ԿՆԽՎԿ-ի[9] և ՄԻԵԿ -ի[10] շրջանակներում ստանձնած հանձնառությունների համաձայն՝ պարտավոր է ընտանեկան բռնության զոհերին պաշտպանելու և օրինախախտներին պատասխանատվության ենթարկելու գործուն միջոցներ ձեռնարկել:

Երբ պետությունը չի իրականացնում այդ հանձնառությունը, ապա վտանգավոր ուղերձ է հղում հասարակությանը կանանց նկատմամբ արական սեռի բռնությունը ինչպես ընդունելի, այնպես էլ անխուսափելի լինելու վերաբերյալ՝ ավելի ամրապնդելով բռնարար վարքի դրսևորումները:

Ըստ համաշխարհային ցուցանիշների՝ ընտանեկան բռնության դեմ օրենքի ընդունումից հետո զգալիորեն նվազում են կնասպանության դեպքերը (Ռիչարդս և Հագլունդ [Richards and Haglund] 2015): Հայաստանը պետք է արգելի ընտանեկան բռնությունը և կանանց նկատմամբ բռնության այլ ձևերը ավելի կտրուկ պետական արձագանքի ու օրենսդրության միջոցով:

9 [Ծան. թարգմ.] Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (ԿՆԽՎԿ/CEDAW)

10 Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա

Պետական մարմինները, այդ թվում, ոստիկանությունը, դատախազությունն ու դատարանները, պետք է հաշվետու լինեն կանանց և աղջիկների անվտանգությունն ու արդադատության հասանելիությունը ապահովելու հարցում: Անհրաժեշտ է արտակարգ իրադրությունները կարգավորող ու հատուկ պաշտպանություն ապահովող հրամանների[11], մեղավորների հետապնդման և օրենքի ողջ խստությամբ պատժելու միջոցով վերջ դնել անպատժելիությանն ու աջակցել զոհերին օգնություն տրամադրող կազմակերպություններին: Նաև շատ կարևոր է մշակել և կիրարկել հատուկ օրենսդրություն, որը կտարբերակի գենդերային շարժառիթով սպանությունները՝ հնարավորություն տալով մանրամասն ուսումնասիրել պատճառներն ու առանձնահատկությունները և համապատասխան քայլեր մշակել կնասպանությունը արդյունավետ թիրախավորելու համար: (ՄԱԿ ԳԽ 2013):

Անհրաժեշտ է անցկացնել համալիր դասընթացներ սոցիալական աշխատողների, ոստիկանության, առողջապահական ծառայություններ մատուցողների, բժշկական փորձաքննություն իրականացնողների, դատական համակարգի պաշտոնյաների և ընտանեկան բռնության հետ առնչվող այլ անձանց շրջանում՝ զուգընկերոջ կողմից իրականացված բռնությունն արդյունավետորեն տարբերակելու, ռիսկային գործոնները գիտակցելու, զոհերին պատշաճ օգնություն ցուցաբերելու ու անհրաժեշտ ուղղորդումներ կատարելու գործում:

Այս առումով, Կոալիցիայի անդամները աշխատում են զարգացնել պետական սոցիալական աշխատողների, ոստիկանության և քաղաքացիական հասարակության կարողությունները՝ դեպքերը բացահայտելու և

[11] Դրանց թվում կարող է լինել բռնարարին անմիջապես տանից հեռացնելը, պարտադրելը, որ տանից կամ զոհերից որոշակի հեռավորություն պահպանի և այլն:

համապատասխան ուղղորդումներ կատարելու համար: Սակայն անելիքները դեռևս բազմաթիվ են. պետական արձագանքը խստացնելու, օրենսդրական կարգավորումները մշակելու ու կիրարկելու հետ համատեղ անհրաժեշտ է նաև զարգացնել կարողությունները:

Վերահսկողության ու տվյալների հավաքագրման բացակայություն

Հայաստանում, ինչպես բոլոր հետխորհրդային երկրներում, զուգընկերոջ կողմից իրականացած կնասպանության վերաբերյալ վիճակագրական տվյալները դժվար հասանելի են, քանի որ պետական մարմինների մեծամասնությունը չի հավաքագրում ընտանեկան և գենդերային բռնության վերաբերյալ տվյալներ:

Ազգային վիճակագրությունը չի հաշվառում մահաբեր հարվածների, ինքնասպանության հասցնելու, անհրաժեշտ պաշտպանության վիճակում կատարած սպանության կամ ոչ դիտավորյալ սպանության դեպքերը: Նույնիսկ երբ տվյալները հասանելի են, սպանությունների և դրանց նախորդող բռնության գործողությունների միջև կապը հեշտ չի հաստատվում, քանի որ դրանք պաշտոնապես չեն փաստաթղթավորվում, իսկ բժշկական փորձագետները հաճախ հավատարիմ են հանցագործությունները կոծկելու գործելավոճին:

Ավելին, սպանությունների դասակարգման այնպիսի ոչ հստակ կատեգորիաների օգտագործումը, ինչպիսիք են «կրքից դրդված հանցագործությունները» կամ «խանդի շարժառիթով հանցագործությունները» հանգեցնում են կնասպանության դեպքերի սխալ բնորոշմանն ու թերի ներկայացմանը: Այսպիսով, Հայաստանում յուրաքանչյուր տարի զուգընկերոջ և ընտանիքի անդամների կողմից

սպանված կանանց փաստացի թիվը մնում է անհայտ: Վերահսկողության և հետազոտական մեխանիզմների ուժեղացման համար պահանջվում է, որ սպանությանը վերաբերող տվյալները հավաքագրվեն ըստ սեռի, իսկ զեկույցը պարունակի տուժողի և հանցագործի միջև եղած կապին ու մահվան հանգամանքներին վերաբերող կարևոր տեղեկատվություն:

Նման զեկույցներ պատրաստելիս համապատասխան մարմինները պետք է համագործակցեն՝ կնասպանության դեպքերը պատշաճ բնորոշելու համար: Ավելին, միօրինականացված ուղեցույցների ու կնասպանության դեպքերը բնորոշող և փաստագրող դասակարգիչների ներդրման մեծ անհրաժեշտություն կա:

Հնարավոր է նաև օգտագործել նորարարական մեթոդներ, ինչպես օրինակ բառային դիահերձման մեթոդը[12], որը ենթադրում է հարցազրույցի միջոցով մահվան հանգամանքների և այն կանխելու միջոցների մասին տեղեկատվության հարցում տուժողին մտերիմ անձանցից (ՄԱԿ ԳԽ 2013):

Տվյալների հավաքագրման նորարարական մեթոդների կիրառումը հատկապես կարևոր է Հայաստանի նման տվյալների սահմանափակ շրջանակ ունեցող երկրների դեպքում, որտեղ ոստիկանական զեկույցները հաճախ թերի են կամ բացակայում են, իսկ ոստիկանությունը

[12] [Թան. թարգմ.] Ըստ ԱՀԿ-ի բառային դիահերձումը մեթոդ է, որն օգտագործվում է զոհի մահվան պատճառը պարզելու նպատակով: Այն իրականացվում է մտերիմ հարազատի կամ խնամակալի հետ հարցազրույցի միջոցով՝ օգտագործելով նախազգուշացնող նշանների, հիվանդության պատմության վերաբերյալ և մահը նախորդող հանգամանքները բացահայտող ստանդարտացված հարցաշար: Մեթոդը հիմնականում կիրառվում է տվյալների գրանցման թերզարգացած մեխանիզմներ ունենալու, ինչպես նաև տանը տեղի ունեցած մահվան դեպքեր բացահայտելու պարագային: Մանրամասների համար տես՝ «ԱՀԿ բառային դիահերձման ստանդարտներ. ԱԿՀ 2014 դիահերձման գործիք» [WHO Verbal autopsy standards: The 2014 WHO verbal autopsy instrument], կապուղի՝ http://www.who.int/healthinfo/statistics/verbalautopsystandards/en/

անկարող է կամ պատրաստակամ չէ հետաքննելու նման սպանությունները (PATH[13] 2009):

Փորձելով վերացնել կնասպանության ու գենդերային բռնության դեպքերն՝ ինչպես միջազգային, այդ թվում՝ «Մարդու իրավունքների ջատագովներ»[14] և «Համաշխարհային իրավունքները կանանց համար»[15] գործակալությունները, այնպես էլ տեղական՝ «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի» անդամ կազմակերպությունները հավաքագրում են դրանց վերաբերյալ փաստագրական պատմություններ: Վերջիններս հարցականի տակ են դնում ոստիկանության արձագանքը ինքնասպանության և չփաստաթղթավորված գործերին՝ առաջադրելով այն վարկածը, որ այդ հանցագործությունները դիտավորությամբ կոծկվել են և՛ ընտանիքի անդամների, և՛ պատկան մարմինների կողմից հավասարապես:

Կնասպանության վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության տիրապետելը չափազանց կարևոր է՝ դրա առանձնահատկությունները հասկանալու ու գործող, փաստերով հիմնավորված հակադարձման մեխանիզմներ մշակելու համար, որոնք կամրապնդեն կանանց անվտանգությունը և կպատժեն մեղավորներին: Տվյալների անբավարար առկայությունն ու տեղեկատվական համակարգերի բացերը ոչ միայն խոչընդոտում են կնասպանության դեպքերի հետաքննությանն ու համարժեք արձագանքին, այլև արգելակում են նման մահերը կանխող խելամիտ ռազմավարությունների մշակումն ու բարեփոխված քաղաքականությունների ջատագովումը:

[13] [Ծան. թարգմ.] Պատշաճ տեխնոլոգիաներն՝ առողջապահությանում Ծրագիր [Program for Appropriate Technology in Health]: Կապուղի՝ http://www.path.org/

[14] [Ծան. թարգմ.] The Advocates for Human Rights կազմակերպություն: Պաշտոնական կայքէջ՝ http://www.theadvocatesforhumanrights.org/

[15] [Ծան. թարգմ.] Global Rights for Women կազմակերպություն: Պաշտոնական կայքէջ՝ http://globalrightsforwomen.org/

Կնասպանության զոհերին, բռնարարներին ու մահվան վտանգ պարունակող դեպքերն ուսումնասիրող հետազոտությունները կօգնեն պարզելու հայաստանյան իրականությանը հատուկ ռիսկային և պաշտպանական գործոնները և կօգնեն ծառայություն մատուցողներին ավելի լավ հասկանալ բռնությունը վերապրողների կարիքներն ու բռնարարների բնութագրերը՝ կնասպանությունը կանխող քայլեր ձեռնարկելու համար: Անհրաժեշտ է նաև հատուկ ուսումնասիրել կնասպանության հնարավոր վտանգի առավել ենթակա խոցելի խմբերին, ինչպիսիք են ծնողազուրկները, սեռական փոքրամասնությունները, տարեց և սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող կանայք:

Այնպիսի այլընտրանքային մեթոդների[16] կիրառումը, ինչպիսիք են մահվան մանրամասների վերանայումը, իրավահաջորդների/ներկայացուցիչների հետ հարցազրույցները և բառային դիահերձումը[17], կարելի է օգտագործել կնասպանության բնույթը հասկանալու և այն ավելի խորացնելու համար, բայց, իհարկե, վերահսկողության ու տվյալների հավաքագրման մեխանիզմները էականորեն բարելավելու համար անհրաժեշտ է սպանությունների տվյալների պետական բազայի ձևավորում, որտեղ կպահպանվեն սպանությունների վերաբերյալ տվյալները՝ հավաքագրված ոստիկանական, դատական, բժշկական ու դիահերձարանների արձանագրություններից:

Այնուամենայնիվ, նույնիսկ բարելավված վերահսկողության պայմաններում, կնասպանության վիճակագրությունը չի արտացոլի բռնության իրական պատկերը, քանի որ

16 [Ծան. թարգմ.] Սրանք միջազգային ճանաչում ստացած մեթոդներ են կնասպանությունների ուսումնասիրման, տվյալների հավաքագրման և դրանց հակազդող քաղաքականություններ մշակելու և իրականացնելու համար:

17 [Ծան. թարգմ.] Տե՛ս ծանոթություն 12-ը:

շատ կանայք ընտանեկան բռնության հաղորդում չեն ներկայացնում ոստիկանությանն ու դատախազությանը և ոչ էլ փորձում են պաշտպանել իրենց իրավունքները, ինչը պայմանավորված է իրավական և արդարադատության համակարգերի բացթողումներով: Քանի դեռ համակարգը ինքնին կոռումպացված է, միշտ էլ կլինեն կոծկված գործեր: Հետևաբար, այս իրավիճակում հնարավոր չի լինի գրանցել մեծ հաջողություններ՝ առանց քրեական արդարադատության համակարգի հիմնանորոգման և առկա իրավիճակի բարեփոխման քայլեր ձեռնարկելու:

Անբավարար լուսաբանումը

ՁԼՄ-ները հիմնարար դերակատարում ունեն լսարանի կողմից սպառվող բռնության սոցիալական կոնստրուկտների ու պատմույթի ձևավորման և հավերժականացման գործում: Հեռուստատեսություն դիտում է Հայաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը և, հետևաբար, մի շարք հարցերի շուրջ ընկալումների ու վերաբերմունքի ձևավորման հարցում այն ունի հեռահար ազդեցություն:

Ամենահայտնի հեռուստատեսային ծրագրերից շատերը ամրապնդում են կանանց ստորադասող և հայրիշխանական նորմերը՝ տարածելով բռնության ու ճնշումների միջոցով կանանց վերահսկելու գաղափարը: Ցավոք, ՁԼՄ-ներն ու հասարակությունը չեն կարևորում կնասպանության դեպքերը: Դրանք հաճախ ներկայացվում են որպես բացառություններ կամ ընտանեկան ողբերգություններ և ոչ երբեք՝ որպես գենդերային գերիշխանության համակարգի արդյունք:

Հաճախ վկայակոչվում է տղամարդու՝ սեփական զգացմունքները վերահսկելու անկարողությունը, ինչը հանգեցնում է զուգընկերոջ հանդեպ բռնության

օրինականացմանը: Կնասպանության վերաբերյալ հրապարակումներում կնոջ սպանությունը վերագրվում է «կրքից դրդված հանցագործություններին», «խանդին» կամ պայմանավորում թմրանյութերի ու ալկոհոլի օգտագործմամբ՝ ամբողջովին անտեսելով այն իրողությունը, որ բռնությունները բխում են տղամարդկանց իշխանության և վերահսկողության, ինչպես նաև կանանց՝ հարաբերական արժեք ունենալու վերաբերյալ վնասարար հայրիշխանական հայացքների ակունքներից:

Վատագույն դեպքում, ՋԼՄ-ները ստանձնում են զոհին մեղադրողի դերը: Որոշ դեպքերում, երբ զուգընկերը ներկայացվում է որպես խանդոտ կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձ, արդարացվում է ոչ միայն տղամարդու՝ զայրույթը կառավարել չկարողանալը, այլև կանայք պատկերվում են որպես զայրույթը հրահրողներ, իսկ նրանց սեռական պատմությունները ներկայացվում են որպես սպանության դրդապատճառ:

Զոհերին մեղադրելով ու դեպքերը սխալ, որպես առանձին միջադեպեր ներկայացնելով՝ անտեսվում է կնասպանության՝ որպես լայն սոցիալական խնդրի և տվյալ բռնության ակտի միջև կապը, և ավելի է խորացնում զուգընկերոջ կողմից կանանց սպանությունների վերաբերյալ հասարակական թյուրընկալումները:

Կնոջը ստորադասող և բռնություն քարոզող նյութերի տարածման փոխարեն օգտագործելով հեռուստատեսությունն ու լրատվության մյուս ձևերը որպես կնասպանության ու գենդերային հիմքով բռնության այլ դեպքերի վերաբերյալ հավաստի տեղեկատվության ազդեցիկ միջոց՝ կնպաստի կնասպանությունը սպանությունից տարբերակելուն և կխրախուսի հանրությանը ձեռնարկելու գործողություններ՝ հակադարձելու այս միտումները: Այս կարևոր լուսաբանող հոդվածները,

լրատվական նյութերն ու մեդիա արշավները պետք է անմիջականորեն տեղեկացնեն ու նախազգուշացնեն հասարակությանը, որ զուգընկերոջ կողմից կանանց սպանությունը «խանդի» քողի տակ որակվում է որպես կանանց հանդեպ գործած հանցանք՝ արմատավորված հայրիշխանությամբ ու կանանց ստորադասելու պատկերացումներով, և հետևաբար, պետք է պատժվի:

Անժխտելի է՝ վերջին տասնամյակում կանանց սպանությունները սոցիալական ու լրատվական ավելի մեծ ուշադրության են արժանանում՝ հիմնականում Կոալիցիայի և այլ իրավապաշտպանների գործունության՝ ընտանեկան բռնությունը հաղթահարողներին և կնասպանության զոհերին դատարաններում պաշտպանելու և մարդու իրավունքների խնդիրները բարձրաձայնելու շնորհիվ:

Կոալիցիան հետամուտ է եղել ընտանեկան բռնության մի քանի աղմկահարույց գործերի հանրայնացմանն ու դատարաններում դռնբաց նիստերի միջոցով ապահովել լայն լուսաբանում: Դատական նիստերի մշտադիտարկման և արդարադատության ձգտելու ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ հանրայնացնել ընտանեկան բռնության դեպքերը:

Ընդամենը մեկ տասնամյակ առաջ ընտանեկան բռնության կամ կնասպանության կարևոր խնդիրը արծարծող և ոչ մի հոդված կամ հեռուստատեսային ծրագիր գործնականում գոյություն չուներ, մինչդեռ այժմ ամսական միջինում 50 հոդված և հեռուսատեսային հաղորդում է հրապարակվում:

Կոալիցիան կազմակերպում է նաև լրագրողների և լրատվամիջոցների ներկայացուցիչների համար դասընթացներ՝ ընտանեկան բռնության դեպքերը պատշաճ լուսաբանելու վերաբերյալ: Այնուամենայնիվ, դեռ բավական աշխատանք է պետք կատարել

իրազեկվածության բարձրացման և կարողությունների զարգացման միջոցով լրատվամիջոցների զգայունությունը մեծացնելու համար՝ հատկապես շեշտադրելով գենդերային հավասարության հիմնահարցերին համալիր մոտեցումը (մեյնսթրիմինգը):

Աջակցման ծառայությունների բացակայություն

Կանայք հաճախ ընտանեկան բռնության վերաբերյալ հաղորդում չեն ներկայացնում՝ աջակցման ծառայությունների բացակայության, ինչպես նաև բազմաթիվ մշակութային, իրավական, և համակարգային խոչընդոտների պատճառով՝ իրենց ենթարկելով զուգընկերոջ կամ ընտանիքի անդամի կողմից սպանության առավել մեծ վտանգի: Ավանդական ընտանեկան արժեքների վերաբերյալ խորապես արմատավորված համոզմունքները ամրապնդում են այն գաղափարը, որ տղամարդիկ պետք է լինեն գերիշխող, իսկ կանայք՝ ծառայող ու հնազանդ:

Շատ հաճախ կանայք պարտավորվածության ահռելի ճնշում են զգում՝ շարունակելու բռնարար հարաբերությունները, քանի որ խնդրի բարձրաձայնումը ընկալվում է որպես ընտանիքի խայտառակում: Հետևաբար, արդարացնելով բռնությունը՝ կանայք ընտելանում են այդ վարքագծին, իսկ ընտանեկան բռնությունը համարում սովորական երևույթ, ինչն էլ խոչընդոտում է նրանց խզելու բռնարար հարաբերությունները:

Նույնիսկ ծայրահեղ իրավիճակներում կանայք հազվադեպ են դիտարկում իրավական համակարգը որպես օգնության հնարավորություն, և ընտանեկան բռնության խնդիրը

պահվում է գաղտնիության շղարշով պարուրված: Հաճախ վարույթում գտնվող գործերը կարճվում են: Կանայք տարբեր պատճառներով հրաժարվում են ընտանեկան բռնության վերաբերյալ իրենց հաղորդումներից: Նրանք հնարավոր է խուսափում են կործանել ընտանիքը կամ վախենում են ինքնուրույնությունից: Հաշվի առնելով մշակութային նորմերը, նրանք կարող են հրաժարվել նաև խարանի և ամոթի պատճառով: Նրանք կարող են ճնշումների ենթարկվել իրենց ընտանիքների կամ ամուսինների կողմից, սակայն առկա տնտեսական իրավիճակում չկարողանան միայնակ հոգ տանել իրենց և իրենց երեխաների մասին:

Տնտեսական անվտանգության համակարգի բացակայությունը հատկապես սուր է արտահայտված կանանց գլխավորած տնային տնտեսություններում: Համատեղ երեխաների առկայությունը հաճախ զոհերի՝ բռնարար հարաբերությունները լքելու, անկախ ապրելու ու սեփական անձի և ընտանիքի մասին հոգ տանելու անկարողության կարևոր պատճառ է:

Բռնարարներին լքած կանայք հաճախ դժվարությունների են հանդիպում, երբ ցանկանում են երեխաներին այնպիսի դպրոցական ծրագրերում ներառել, որը թույլ կտա միաժամանակ աշխատել: Երբեմն նրանք ստիպված են երեխաներին մանկատներ կամ գիշերօթիկ դպրոցներ տանել, որի հետևանքով խնամակալությունը կորցնելու մշտական վտանգի տակ են գտնվում: Հասարակական ու իրավական աջակցության բացակայությունը հաճախ կանանց այլ հնարավորություն չի տալիս, քան շարունակել ապրել բռնի հարաբերություններում: Հղիության և բռնության միջև կապը լայնորեն ուսումնասիրվում է: Մի շարք մշակույթներում զուգընկերոջ բռնությունը մայրական մահացության

դեպքերի զգալի մասի պատճառ է (Մաքֆարլեն և այլք 2002, Քեմբլ և այլք 2009[MacFarlane et al 2002, Campbell et al 2009], ԱՀԿ 2012): 2015թ. Կանանց աջակցման կենտրոնին դիմած 68 նոր դեպքերում կանանց 70% -ը ծեծի էին ենթարկվել հղիության ընթացքում, իսկ նրանցից որոշները նույնիսկ կորցրել էին պտղին: Կնասպանություն չորակված Մարո Գուլոյանի դեպքում նա սպանվել էր իր երկրորդ երեխայով չորս ամսական հղիության ժամանակ:

Գենդերային հիմքով բռնության ենթարկված կանանց համար պետք է հասանելի լինեն նրանց պաշտպանող ու զորակցող ծառայությունները՝ բռնության շղթայից ազատվելու համար: Իրավապահներն ու ծառայություններ մատուցողները պետք է համակարգեն իրենց աշխատանքները՝ լավագույնս ծառայելու ընտանեկան բռնության ենթարկված կանանց և նրանց երեխաներին: Համակողմանի ծառայությունները պետք է ներառեն տուժողի ինքնուրույնությունն ու ինքնահարգանքը բարձրացնող հոգեբանական, սոցիալական և իրավաբանական աջակցությունն, ինչպես նաև տան անվտանգության ապահովումը՝ բռնությունը նվազեցնելու ու բռնության ենթարկված կանանց հասարակությունում նորից ներգրավվելու համար:

Ներկայումս, Հայաստանում ընտանեկան բռնության միայն երկու ապաստարան է գործում, երկուսն էլ Կոալիցիայի անդամ՝ «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի ու « Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ-ի միջոցներով: Միաժամանակ այդ ապաստարաններում կարող է բնակվել միայն 15 կին իրենց երեխաներ հետ: Երբ երկու ապաստարաններն էլ գերբեռնված են լինում, Կոալիցիայի անդամներն են բնակավայրի վարձավճար ու անվճար ծառայություններ տրամադրում օգնություն փնտրողներին:

Ապաստարանների բացակայությունը՝ հատկապես մայրաքաղաքից դուրս գտնվող բնակավայրերում, ուղղակիորեն նշանակում է, որ ավելի քիչ կանայք են օգնություն ստանում, և սրում է կանանց բռնության ենթարկվելու ու սպանվելու վտանգը, քանի որ վերջիններս հաճախ չունեն բռնարարի հետ ապրելուն այլընտրանք: Ահա, թե ինչու է բացարձակ հրամայական, որպեսզի կառավարությունը՝ համագործակցելով քաղաքացիական հասարակության հետ, ապաստարաններ գործարկի հանրապետության ողջ տարածքում և ֆինանսավորի օգնություն տրամադրող կառույցներին:

Ընտանեկան բռնությունը յուրաքանչյուր երեխայի վրա յուրովի է ազդում, այնուամենայնիվ, ապրելով այնպիսի ընտանիքում, որտեղ առկա է բռնություն, շատերի համար կարող է հանգեցնել լուրջ հուզական և վարքային խնդիրների՝ մեծացնելով վտանգը, որ իրենց հետագա հարաբերություններում նրանք կդրսևորեն զոհի կամ բռնարարի վարքագիծ: Աջակցող և սիրող մեծահասակի առկայությունը կարևոր պաշտպանական գործոն է մայր կորցնելու հոգեբանական վնասվածքներից վերականգնվելիս:

Ցավալի է, որ բռնությունից տուժած երեխաները շարունակում են ապրել՝ վախենալով իրենց անվտանգության համար: Պատկան մարմինները պետք է ապահովեն, որ ոչ մի երեխա չապրի բռնարարի հետ, իսկ բոլոր անուղղակի տուժողները ստանան անհրաժեշտ խորհրդատվություն ու հետևողական խնամք: Բոլոր ընտանեկան բռնության ենթարկված, ինչպես նաև ծնողի կամ երեխայի մահը վերապրած անձիք իրենց հուզական բարեկեցությունը վերականգնելու համար պետք է անհրաժեշտ խորհրդատվություն և աջակցություն ստանան:

Կանխարգելումը նշանակետում

Կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի կանխարգելման ամենաարդյունավետ միջոցն այն նախապես կասեցնելն է: Քանի որ մահացու ընտանեկան բռնությունը սեպի պես մխրճված է խիստ հայրիշխանական ավանդույթներում ու բխում է գենդերային բռնության՝ մշակութորեն ընդունելի ընկալումներից, ապա ավելի մեծ ջանքեր է պահանջվում նման համոզմունքների համակարգերը վիճարկելու ու հասարակությանը մոբիլիզացնելու՝ կրթական ծրագրերի և ռազմավարությունների մշակման, իրականացման ու աջակցության միջոցով վնասարար գենդերային կարծրատիպերի դեմ պայքարելու համար:

Վերջին հինգ տարիների ընթացքում Կոալիցիան իրականացրել է իրազեկվածության բարձրացման բազմաթիվ միջոցառումներ, որոնց թվում են Ընտանեկան բռնության դեմ պայքարի ազգային օրվա և Ընդդեմ գենդերային հիմքով բռնության 16-օրյակի շրջանակներում իրականացված հանրային միջոցառումները:

Հանրային ակտիվության ու լրատվական հարթակների միջոցով թիրախավորվել են սոցիալական այն հիմնային նորմերը, որոնք թույլատրում են հայ հասարակությունում կանանց նկատմամբ բռնության տարածումը: Այդուհանդերձ, հայ հասարակությունում կանանց կարգավիճակի բարելավմանը խոչընդոտող նշանակալի արգելքներ կան, այդ թվում՝ պետական մակարդակով իրականացվող համապարփակ ծրագրերի բացակայությունը:

Կնասպանության դեմ հնարավոր չէ լիովին պայքարել՝ չխարխլելով հայ հասարակությունում գերիշխող կանանց ստորադասման ու հայրիշխանության հիմքերը: Մեծ ջանքեր են պետք ներդնել տեղական համայքների հետ համագործակցելու և գենդերային հիմնահարցերը ներառող այնպիսի կրթական ծրագրեր ու օրենսդրություն մշակելու համար,որոնք կհասցեագրեն կառուցվածքային բռնությունը[18] տեղական ու ազգային մակարդակով, ինչպես նաև կնպաստեն բարձր վարձատրվող աշխատանք գտնելու, սեփականություն ձեռքբերելու ու որոշում կայացնող պաշտոններում առաջադիմելու կանանց հնարավորությունները:

[18] [Ծան. թարգմ.] Կառուցվածքային բռնությունը համակարգային բռնության ձև է, որը շատ նուրբ ու անտեսանելի է: Այն տեղի է ունենում, երբ հասարակական կառույցներն ու հաստատությունները խոչընդոտում են անձին բավարարելու իր հիմնարար կարիքները, և նա հայտնվում է անբարենպաստ վիճակում կամ վնասում է նրա կենսագործունեությանը: Այս եզրը շրջանառել է Յոհան Գալտունգին՝ իր «Բռնություն, խաղաղություն և խաղաղության հետազոտություններ» (1969 թ.) հոդվածում: Մանրամասները տե՛ս հետևյալ կապուղով՝ http://www.structuralviolence.org/structural-violence/

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ընտանեկան բռնությունը կանխարգելող օրենքը կենսականորեն անհարժեշտ է, որպես հասարակության առողջացման և բռնությունը կանխարգելող օրենսդրություն:

- Անհրաժեշտ է ներդնել բռնարարի վտանգավորության աստիճանը գնահատող համակարգ, որի միջոցով հնարավոր կլինի պարզել զոհերի համար ամենից հավանական վտանգները և համապատասխան քայլեր ձեռնարկել զոհերի պաշտպանության համար:

- Երեխայի խնամակալությունը չպետք է հանձնվի բռնարարներին, ու պետական խնամակալության և հոգաբարձության մարմինները պետք է խիստ վերահսկողություն սահմանեն խնամակալության յուրաքանչյուր դեպքի անցումային շրջանի վրա:

- Առաջին իսկ հանցանքի դեպքում բռնարարի հանդեպ միջոցառումների կիրառումը կծառայի որպես բռնության զսպման արդյունավետ մեխանիզմ՝ շեշտադրելով վերականգնման և ներառման մեխանիզմներ:

- Ընտանեկան բռնությունների քրեական հետաքննության ընթացքում անհրաժեշտ է ներդնել բռնարարների վարքը մշտադիտարկող ու բռնությունը զսպող պաշտպանական հրամանների ու կարգադրությունների լծակներ:

- Համապետական մոտեցում է պետք սահմանել մասնագետների պատրաստման ու նրանց կողմից ընտանեկան բռնությունը վերապրած կանանց ու երեխաների շարունակական վերահսկողություն իրականացնելու համար:

- Պաշտոնատար անձինք և ծառայություն մատուցողները պետք է մասնակցեն համապարփակ ծրագրերով դասընթացների, որպեսզի հստակ պատկերացումներ ունենան ընտանեկան բռնության, այդ թվում՝ դրա դրսևորումների, պատճառների, վնասվածքների (տրավմաների) հետևանքների, ռիսկերի գնահատման և անվտանգության ծրագրերի փոխկապակցվածության վերաբերյալ:

- Իրավապահներն ու ծառայություն մատուցողները պետք է համակարգեն իրենց ջանքերը, որպեսզի տրամադրեն հոգեբանական, սոցիալական ու իրավաբանական խորհրդատվություն, ապահովեն տան անվտանգությունը, ինչպես նաև մշակեն նախաձեռնություններ տուժածներին զորակցելու ու հասարակությունում իրենց տեղը վերագտնելու համար:

- Պետք է ստեղծել իրավախախտների (բռնարար հանցագործների)պետական գրանցամատյան/ռեեստր ու ընտանեկան սպանությունները խորը ու համապարփակ ուսումնասիրող համապատասխան որակավորված թիմ:

- Իշխանությունները պետք է ապահովեն, որ անուղղակի տուժողները ստանան համապատասխան խորհրդատվություն ու հետևողական խնամք, ինչպես նաև գտնվեն բռնարարների վերահսկողությունից դուրս:

- Մեծ ջանքեր են պետք ներդնել տեղական համայքների հետ համագործակցելու և օրենսդրությանը զուգահեռ՝ գենդերային հիմնահարցերը ներառող կրթական ծրագրեր մշակելու համար:

ՄԻԱՑՀՐ ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԴԱՐՁՀՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻ ՋԱՏԱԳՈՎ

COALITIONAGAINSTVIOLENCE.ORG

ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան» հիմնադրվել է 20-ամյա Զարուհի Պետրոսյանի ողբերգական մահվանն ի պատասխան: Կնասպանության այս դեպքը ցուցադրեց Հայաստանում ընտանեկան բռնության լուրջ խնդիր լինելն ու հասարակական բողոքի մեծ ալիք բարձրացրեց:

Կոալիցիայի առաքելությունը եռասայր է. բարձրացնել կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ իրազեկվածությունը հանրության շրջանում ու փոփոխել առկա մտածելակերպը, պաշտպանել ու օժանդակել բռնության ենթարկված կանանց, ինչպես նաև ջատագովել զոհերին պաշտպանող ու հանցագործներին պատժող օրենսդրության ընդունումը: Մեր տեսլականն է աջակցել այնպիսի հասարակության կառուցմանը, որտեղ կա իրական հավասարություն, չկա խտրականություն և բռնություն:

Եթե դուք կամ որևէ մեկն, ում ճանաչում եք, տուժել է ընտանեկան կամ սեռական բռնությունից, ապա Կոալիցիայի անդամ կազմակերպությունների կողմից մատուցվող անվճար խորհրդատվության ու օժանդակության համար կարող եք դիմել հետևյալ հեռախոսահամարներով.

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան» 094-48-84-80
«Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի ընտանեկան բռնության թեժ գիծ՝ 099-88-78-08
«Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ-ի ընտանեկան բռնության թեժ գծի հեռախոսահամարներ՝ 010-54-28-28 / 0-800-80-850
«Կանանց ռեսուրսային կենտրոն հիմնադրամ» ՀԿ-ի սեռական բռնության և ճգնաժամային կենտրոնի թեժ գիծ՝ 0-800-01-280
«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի գրասենյակ՝ 094-56-56-26
«Հասարակություն առանց բռնության» ՀԿ Արագ արձագանքման խումբ՝ 091-42-81-92
«Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ (ՓԻՆԿ Հայաստան) գրասենյակ՝ 060-37-72-77
«Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ գրասենյակ՝ 010-24-93-18

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱԿ-ի համակարգի գիտական խորհուրդ [Academic Council on the United Nations System], Ֆեմիցիդ. Գործողություններ պահանջող համաշխարհային խնդիր [Femicide: A Global Issue that Demands Action.], 2013 [անգլերեն] Կապուղի՝ http://www.genevadeclaration.org/fileadmin/docs/Co-publications/Femicide_A%20Gobal%20Issue%20that%20demands%20Action.pdf.

Քեմբլ Ջ.Ս., Գլաս Ն., Շարփս Փ.ՈՒ., Լոուղոն Ք., Իռուգի Ն, Սաթերլանդ Մ.Ա. [Campbell JC, Glass N, Sharps PW, Laughon K, Yragui N, Sutherland MA], Ջուգընկերոջ բռնության, կնասպանության փորձի ու հղիությանը զուգորդված կնասպանության վերաբերյալ զեկույց [Research on Intimate Partner Violence and Femicide, Attempted Femicide, and Pregnancy-Associated Femicide], Ընտանիքի ու զուգընկերոջ բռնություն պարբերական [Family and Intimate Partner Violence Quarterly], 2-րդ հատոր, 2-րդ հրատարակություն, [անգլերեն]

Ռիչարդս Դ.Լ., Հագլունդ Ջ. [[David L. Richards and Jillienne Haglund] Կանանց նկատմամբ բռնությունն ու օրենքը [Violence Against Women and the Law], Լոնդոն, Պարադիգմ հրատարակչություն, 2015, [անգլերեն]

Մաքֆարլեն Ջ., Քեմբլ Ջ.Ս., Շարփս Պ և Ուաթսոն Ք. [McFarlane J, Campbell JC, Sharps P, and Watson K.], Բռնությունը հղիության ընթացքում և կնասպանություն. կանանց առողջության համար շտապ առնչություններ [Abuse during pregnancy and femicide: urgent implications for women's health], Obstet Gynecol, 100(1), էջ 27-36, 2002, [անգլերեն]

Եվրոպայի անվտանգության ու համագործակցության կազմակերպություն [Organization for Security and Co-operation in Europe}, Հասարակական կարծիքի հարցում ՀՀ-ում ընտանեկան բռնության վերաբերյալ [Domestic Violence Survey in the Republic of Armenia.], 2011, [անգլերեն] Կապուղի՝ http://www.osce.org/yerevan/88229?download=true.

Պատշաճ տեխնոլոգիաներն՝ առողջապահությունում ծրագիր, Հարավային Աֆրիկայի բժշկական հետազոտությունների խորհուրդ և Առողջապահության համաշխարհային կազմակերպություն [Program for Appropriate Technology in Health,

InterCambios, Medical Research Council of South Africa, and World Health Organization], Ուժեղացնելով կնասպանության գիտակցումը՝ խրախուսել գործողություններն ու պատասխանատվությունը հետազոտության միջոցով [Strengthening Understand of Femicide: Using research to galvanize action and accountability], 2009, [անգլերեն] Կապուղի՝ http://www.path.org/publications/files/GVR_femicide_rpt.pdf.

Սմիթ Փ.Ռ., դի Յոնգ Ռ.Ռ., Քեթրիեն Ս.Ջ., Բիջլիվելդ Ս. . [Smit PR, de Jong RR, and Catrien C.J.H. Bijlevald C.], Սպանությունների տվյալները Եվրոպայում: Սահմանումներ, աղբյուրներ և վիճակագրություն [Homicide Data in Europe: Definitions, Sources, and Statistics], Եվրոպական սպանությունների հետազոտությունների ձեռնարկ [In Handbook of European Homicide Research], էջ 5-23. 2012, [անգլերեն]

«Հասարակություն առանց բռնության» ՀԿ Արագ արձագանքման խումբ, 2016 Կապուղի՝ http://www.swv.am/index.php/en/rapide-response-unit222#.Vt7GkIQhYdU.

ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակ (ՄԱԹՀՊԳ) [United Nations Office on Drugs and Crime, Սպանությունների համընդհանուր զեկույց. Միտումներ, համատեքստ, վիճակագրություն [Global Study on Homicide: Trends, Context, Data], 2011, [անգլերեն] Կապուղի՝ https://www.unodc.org/documents/data-and-analysis/ statistics/ GSH2013/2014_GLOBAL_HOMICIDE_BOOK_web.pdf.

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ) [World Health Organization], Հասկանալով և թիրախավորելով բռնությունը կանանց նկատմամբ [Understanding and Addressing Violence Against Women], 2012, [անգլերեն] Կապուղի՝ http://apps.who.int/iris/bitstream/10665/77421/1/ WHO_RHR_12.38_eng.pdf?ua=1.

Ջոսի Քայե [Josie Kaye], Ֆեմիցիդ, մասայական բռնությունների առցանց հանրագիտարան [Femicide, Online Encyclopedia of Mass Violence], [անգլերեն] Կապուղի՝ http://www.massviolence.org/Femicide

Ռասել Դայանա Է.Հ և Հարմես, Ռոբերտա Ա (Էդս.)[Russell, Diana E.H. and Harmes, Roberta A, (Eds.)] Կնասպանությունը միջազգային դիտակետից [Femicide in Global Perspective], Նյու-Յորք, Թիչերս քոլեջ Փրես [New York: Teachers College Press], 2-րդ հատոր, էջ՝ 13-14, [անգլերեն]

Էլլիս Դեսմոնդ և Ուոլթեր Դիքիսեդերի [Ellis, Desmond and Walter Dekesedery], Սխալներ՝ սոցիոլագիական ուսումնասիրության շեղումների ներածություն, [The wrong stuff: An introduction to the sociological study of deviance]1996, Սքաբարո, Օնթարիո, Ալին էնդ Բեքոն [Scaborough, Ontario: Allyn and Bacon], [անգլերեն]

Քեմբել Ջ. և Ռանյըն Ու. [Campbell, J., and C. W. Runyan], Կնասպանություն՝ ներածություն ըստ հրավիրյալ խմբագիրների , Սպանությունների ուսումնասիրություն ["Femicide: Guest Editors' Introduction." Homicide Studies] 2.4 (1998), էջ 347-352 [անգլերեն]

ՄԱԹՀԳ, E/CN.15/2013/NGO/1 հայտարարություն ներկայացված ՄԱԿ-ի համակարգի գիտական խորհուրդի կողմից, որը Տնտեսական և սոցիալական խորհրդում խորհրդատվական կարգավիճակով ՀԿ է, 2013 թ. ապրիլ, [անգլերեն]

COALITIONAGAINSTVIOLENCE.ORG